ցաւ գիրս թվ. ՌԿԷ, յունիս ԺԹ, աւուր ամառնամտի, ի դուռն սուրբ Նիկողայոս Աքանչելագործի, որ կայ Յատրանու դուռն, ի քաղաքն Կոստանդինուպօլիս ձեռամբ թերաւարժ գրչի Լէհցի Սիմէօն գրչի։ Արդ աղաչեմ զհանդիպողդ անմեղադիր լինել գրիս անյարմարութեան եւ սղալանաց, զի յօրինակին տէրն գնալու էր, վասն այն ի տվէ եւ ի գիշերի անձանձիր նստելով նօտրեցի զսա բազում փութով եւ շտապով, այս է զայս ԺԴ. տեարս ի Ժ. օրն»[9]։

Ճանապարհին իրեն հետ էր Ղուկաս եպիսկոպոս, որ նուիրակութեամբ կ'ուղեւորէր Լեհաստան։ Սա ի վաղուց հետէ ծանօթ էր Սիմէոնի. կը գրէ իւր յուշերուն մէջ Սիմէոն. «Ինձ կայր (Յերուսաղէմ) սիրելի եւ ծանօթ մի եպիսկոպոս Ղուկաս անուն. սա եւ ի Լէհ երեկ հետ ինձ նուիրակ. ես նորա բաղում գործս եւ բան կատարեցի ի Ստամպօլ (1608—1615 շրջանին անշուշտ). այլ եւ գիրս յոլով գրեցի նմա. եւ զայլ սպասաւորութիւնս նորա առնէի» (էջ 251)։ Այլուր (էջ 298) կը գրէ Սիմէոն. «գնեցի լաւ էշ մի եւ ցամաքով գնացի ընդ ուխտաւորս հետ տէր Ղուկաս պարոնտէրին, որ երթայր նուիրակ ի Լէհ. եւ ինձ հրամայեաց մի մեկնել ի նմանէ. որ եւ ես յանձն առի երթալ ընդ նմա մինչ ի Լով՝

---

[9] Տէր-Աւետիսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի, Թ. 256, Ամենափրկիչ Վանաց (անտիպ)։ Տես վերը, էջ 392—393։